

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2018թ. հունիսի 22-ի նիստում

խորհրդի նախագահ՝ ռեկտորի պարտականություններ կատարող՝

Է.Մ. Սևրոբյան



**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

/միջին մասնագիտական կրթություն, առկա և հեռական
ուսուցում/

2018թ.

«Շիրակի Մ.Նալբանդյան ինվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջ պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ ՇՊՀ քոլեջ/ պրակտիկայի կանոնակարգը սահմանում է պրակտիկայի քոլորտեսակների կազմակերպման և իրականացման

- նպատակները և խնդիրները
- բովանդակությունը և փուլերը
- պակտիկայի կազմակերպումն ու անցկացման ժամկետները
- պրակտիկայի գործընթացի սուբյեկտների իրավունքները և պարտականությունները
- ամփոփման և գնահատման կարգը

1.Ընդհանուր դրույթներ

- Ուսանողի պրակտիկան համարվում է մասնագիտական կրթության կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը,որի կազմակերպումը և իրականացումը հնարավորություն է տալիս անմիջական կապ ստեղծել ուսանողի տեսական նախապատրաստության և նրա հետագա մասնագիտական գործության միջև:
- Պրակտիկայի տեսակները, տևողությունը և ժամկետները որոշվում են ուսումնական պլանով՝ ըստ մասնագիտությունների:
- Պրակտիկայի ղեկավարումն իրականացվում է քոլեջի՝ փորձառնական զծով փոխտնօրենի ,պրակտիկայի մեթոդիստի, համապատասխան մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող առարկայական հանձնաժողովի հետ:
- Ուսանողների պրակտիկան անց է կացվում համապատասխան պրակտիկայի բազա հանդիսացող ուսումնական և այլ հաստատություններում:
- Պրակտիկայի անցկացման վայր,կարող է լինել այն հաստատությունը,որն ունի բավարար նյութատեխնիկական բազա և բարձրակարգ մասնագետ:

2.Փորձառնության անցկացման նպատակներն ու խնդիրները

Պրկատիկայի նիմնական նպատակն է՝ ուսանողի, որպես մասնագիտական գործունեության սուբյեկտի կայացումը, տեսական գիտելիքները գործնականում կիրառաելու հմտությունների և կարողությունների ձևավորումը:

- ճանաչողական նպատակ. ծանոթացնել պրակտիկայի համար բազա հանդիսացող հաստատության գործունեությանը, բովանդակությանը և կառուցվածքին:
- Դաստիարակչական նպատակ. մասնագիտական գործունեության նկատմամբ հետաքրքրությունների խթանում:
- ուսումնամեթոդական նպատակ. հետազոտական և վերլուծական գործունեություն իրականացնելու պատրաստության աստիճանի ձևավորում:
- Փորձարարական նպատակ. անձնայի ուղղորդված մասնագիտական գործընթացը ամբողջությամբ մոդելավորելու և իրականացնելու ունակությունների ձևավորում, մասնագիտական գործունեության առաջնային կոմպետենցիաների զարգացում:

Պրակտիկայի հիմնական խնդիրներն են՝

- Ընտրած մասնագիտությունից գիտելիքների ընդլայնում ու ամրապնդում:
- Մասնագիտական գործունեության նախնական փորձի ձեռքբերում :
- Ուսանողների մասնագիտական որակների ձևավորում:
- Մասնագիտական գործունեության նկատմամբ հետաքրքրությունների զարգացում,
- տեսական գիտելիքների գործնականորեն հարստացում,
- ամրապնդում և խորացում, մասնագիտական որոշակի խնդիրների լուծման ժամանակ դրանց գործնական կիրառման հմտությունների ձևավորումը,
- մասնագիտական գործունեության նկատմամբ ստեղծագործական և հետազոտական մոտեցման ձևավորում,
- մասնագիտական որակների՝ ինքնատիրապետում, հանդուրժողականություն , տակտ /և այլն/ ձևավորում,
- ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու կոմպետենցիաների մշակում,
- մասնագիտական գործընթացի ուսումնասիրման և վերլուծության կարողություններ ձևավորում,
- աշխատանքային միջավայրում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում

3. Պրակտիկայի բովանդակությունը և փուլերը

Պրակտիկայի ընթացքում ուսանողների ձեռքբերած կոմպետենցիաները և դրանց զարգացման գործընթացը սահմանուվում են համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերով, պրակտիկայի դասընթացների նկարագրիչներով:

Պրակտիկայի փուլերն են.

- Նախապատրաստական փուլ. նախատեսում է պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների անցկացում՝ պրակտիկայի . ծրագրի կազմում:
- Կազմակերպչական փուլ. նախատեսում է ծանոթացում պրակտիկայի վայրի ներքին կանոնակարգին և կառուցվածքին, ինչպես նաև պրակտիկանտի՝ նախատեսված գործունեության պլանավորման, նրան համապատասխան աշխատանքներին ծանոթացում:
- Կիրառական. նախատեսում է պրակտիկայի վայրում գործունեության ծավալում:
- Ամփոփիչ. նախատեսում է հաշվետվության ներկայացում, պրակտիկայի ընթացքում աշխատանքների ամփոփում և գնահատում:

4. Պրակտիկայի կառավարումը

- Ուսանողի կողմից պրակտիկայի վայրի և դրան ամրացված մեթոդիստի ընտրությունն իրականացնում է առարկայական հանձնաժողովը:
- Պրակտիկային անցկացման վայրի առանձին փոփոխություններ՝ կապված ուսանողի առողջական խնդիրների, հղիության ,մինչև 1 տարեկան երեխա ունենալու, հեռավոր լեռնային բնակավայրում ապրելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետ, ռեկտորատի որոշմամբ թույլատրվում են պրակտիկայի սկսվելուց առնվազն 2/երկու/ շաբաթ առաջ պրակտիկանտի ներկայացրած դիմումի, փոփոխված վայրից համաձայնագրի և համապատասխան տեղեկանքի հիման վրա:
- Պրակտիկային չմասնակցած կամ անբավարար գնահատված ուսանողները՝ պրակտիկան վարով մեթոդիստ-դասախոսի ներկայացմամբ և փորձառնական կրթության գծով փոխտնօրենի միջնորդությամբ կներկայացվեն որպես վտարման ենթակա՝ ՇՊՀ-ի համապատասխան բաժին՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրակտիկայի պատասխանատուին: Բացառիկ դեպքերում/առողջական խնդիրներ, հղիություն, մինչև 1 տարեկան երեխայի առկայության դեպքում, արտակարգ իրավիճակներ, ծառայողական հատուկ ռեժիմ/

պրակտիկայի սկսվելուց հետո առնվազն 1 շաբաթվա ընթացքում ներկայացված դիմումի և համապատասխան տեղեկանքի հիման վրա ռեկտորատը կարող է թույլատրել նրա պրակտիկայի անցկացում նոր ժամանակացույցով:

- Պրակտիկայի ամբողջ գործընթացը ուսանողի կողմից արձանագրվում է պրակտիկանտի օրագրում:

5. Պրակտիկայի անցկացման ժամկետները

- Պրակտիկայի անցկացման ժամկետները որոշվում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանի ժամանակացույցն համապատասխան: Պրակտիկայի անցկացման ժամկետները կարելի է փոփոխել միայն կիսամյակի ընթացքում՝ առարկայական հանձնաժողովի ներկայացմամբ և փորձառնական կրթության գծով փոխտնօրենի հաստատմամբ:

6. Պրակտիկայի գործընթացի սուբյեկտների իրավասությունները

Պրակտիկայի բաժնի իրավանքները.

- Կատարում է <<Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի և ՇՊՀ քոլեջի կանոնադրությունից և այլ իրավական ակտերից բխող պարտականություններ և ունի այդ իրավական ակտերով սահմանված իրավունքներ.
- Վայրի ընտրության, փոփոխության:
- Մեթոդիստի ընտրության:
- Ժամանակացույցի փոփոխման:
- Ու ս ան ո դ ն եր ի զ ն ա հ ատ ու մ ը /10 բ ալ ա յ ի ն հ ամ ս կ ա ր գ /:

Պրակտիկայի բաժնի պարտականություններն են.

- Ապահովել պրակտիկայի հստակ կազմակերպումը, պլանավորումը և արդյունքների հաշվառումը:
- Կազմել և հաստատման ներկայացնել պրակտիկայի անցկացման ժամանակացույց:
- Մշտադիտարկել և վերահսկել պրակտիկայի գործընթացի մասնակիցների աշխատանքը:
- Վերահսկել պրակտիկանտների հաճախումները:
- Գնահատել ուսանողների պրակտիկան:
- Ներկայացնել հաշվետվություն ուսանողների պրակտիկայի վերաբերյալ:

Ուսանողի պարտականությունները.

- Ունենալ մասնագիտական գիտելիք:
- Ենթարկվել պրակտիկայի վայր հանդիսացող հաստատության ներքին կանոնակարգին:
- Պահպանել աշխատանքային կարգապահություն, ամբողջովին կատարել պրակտիկայի ծրագրով նախատեսված առաջադրանքները:
- Պրակտիկայի ավարտին մեթոդիստ-դասախոսին հանձնել լրացված օրագիրը, հանձնարարված առաջադրանքները/դրանց առկայության դեպքում:
- Ապահովել ֆիզիկական ներկայություն:

Ուսանողի իրավունքները.

- Անհրաժեշտության դեպքում ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր՝ պրակտիկայի վայրը փոխելու մասին/առնվազն 2 շաբաթ առաջ/:
- Խորհրդակցել պրակտիկայի ղեկավարի, պրակտիկայի անցկացման վայրի մասնագետների հետ:
- Բողոքարկել իր գնահատականը:

Պրակտիկան կազմակերպող կազմակերպությունների պարտականություններն են.

- Ապահովել ուսանողների աշխատանքի վայրով և պրակտիկայի ծրագրին համապատասխան աշխատանքներ հանձնարարել:
- Նշանակել կազմակերպությունում տվյալ մասնագիտության ուղղությամբ ուսանողի համար պատասխանատու/վերահսկող, համակարգող/:
- Ծանոթացնել ուսանողին աշխատատեղի կանոններին:
- Ապահովել բարոյահոգեբանական մթնոլորտ:
- Բնութագրել ուսանողի պրակտիկան: